Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՀԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՋԼԱՆՔ ԵՒ ՊԻԱՆՔ ԳԱՒԱՌՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Մեծ Հայքի Արցախ աշխարհի (նահանգի) տասներկու գաւառներից միայն Հարջլանքը (տարբ. Հարճղանք, Հարճլանք) եւ Պիանքն են, որոնց յիշատակութիւնը հայկական սկզբնաղբիւրներում սահմանափակւում է բացառապէս «Աշխարհացոյց»-ի երկու գաւառացանկերով (Մեծ Հայքի Արցախ աշխարհի եւ Բուն Աղուանք երկրին ե դարում միացուած ուտիք-արցախեան գաւառների թուարկումներում): Այլ վկայութիւնների բացակայութեան հետեւանքով նրանց տեղադրութեան ոչ դիւրին խնդիրը մասնագէտները լուծել են ինչ-ինչ վարկածներով, որոնք հակասում են հարեւան գաւառների՝ աղբիւրագիտական աւելի ծաւալուն հիմքերով կատարուած տեղորոշումների պատկերին: Նոր տեղորոշման փորձը կարող է յաջող լինել միմիայն «Աշխարհացոյց»-ի աւելի ուշադիր ընթերցանութեան եւ մնացեալ աղբիւրների յարակից տուեալների աւելի զգոյշ օգտագործման դէպքում:

Իր սկզբնական վիճակում Մովսէս Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի վերը նշուած (այդպէս՝ նաեւ մնացեալ) գաւառացանկերում երկու-երեք (երբեմն չորս) անուններից բաղկացած թուարկման խմբաշարերի բացայայտումը (ըստ Բ. Յարութիւնեանի) թոյլ է տալիս նկատել, որ Հարջլանքը եւ Պիանքը երկի հեղինակի պատկերացմամբ (եւ թերեւս նրա առջեւ փռուած Մեծ Հայքի մի հինաւուրց քարտէզում) գտնուել են Արցախի կենտրոնական գաւառների թւում: Այդ նահանգի նկարագրութեան հատուածում, սկսելով նրա գլխաւոր Միւս Հաբանդ գաւառից՝ հայ աշխարհագէտը տալիս է արցախեան հարաւային եւ կենտրոնական գաւառների հետեւեալ մէկընդմէջ թուարկումները. Վակունիք → Բերձոր // Մեծ Իրանք → Մեծ Կուանք → Հարջլանք // Սուխանք → Պիանք → Պաձկանք (յաջորդ Սիսական-ի Կոտակ գաւառը նահանգի ամենահարաւում է, իսկ ապա յաջորդող Քուստ-ի Փառնէսը եւ Կողթը՝ ամենահիւսիսում): Բուն Աղուանքին միացուած ուտիքարցախեան կենտրոնական գաւառների թուարկման խմբերը (ամենահիւսիսին վերաբերող Շակաշէն → Գարդման // Քուստ-ի Փառնէս → Կողթ // Աղուէ → Տուս-Քուստակ խմբերից յետոյ) այսպիսին են. Ուտ-Ռոստակ → Ռոտ-Պացեան // Մեծ Կուանք → Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք (սրանց յաջորդում են հարաւային, հետագայում բացի վերջինից Դիզակի իշխանութեան, ապա թագաւորութեան մաս կազմած գաւառները՝ Պաձկանք → Սուխանք // Վակունիք → Բերձոր // Փոքր Հաբանդ → Սիսական-ի Կոտակ → [Տրի] → Առանռոտ):

Առաջին գաւառացանկում Հարջլանքին հարեւան Մեծ Իրանք (կամ Մեծ Առանք) եւ Մեծ Կուանք (կամ Մեծ Կողմանք) գաւառների տեղորոշումները, շնորհիւ այլ աղբիւրներում նրանց մասին եղած մեծաքանակ յիշատակումների, նոր գրականութեան մէջ հաստատուն են: Առաջինը տարածւում էր Տրտու գետի միջին հոսանքից հարաւ՝ ներառելով նաեւ Խաչենագետի հովիտը եւ Շիկաքար ամրոցի շրջանը արդէն Կարկառի աւազանում, իսկ երկրորդը՝ Տրտուի միջին հոսանքից հիւսիս՝ ներառելով նաեւ Մռաւի լեռնաշղթայի հիւսիսարեւելեան փեշերը մինչեւ դաշտաբերան: Ընդ որում Տրտուի գետահովտում երկու գաւառների դէպի արեւմուտք տարածման սահմանը ճշտելու համար աղբիւրների ուղղակի վկայութիւնները պակասում են:

Մեր նախորդ աշխատանքներում ցոյց տրուած, որ բաւարար հիմքեր կան Վակունիքը (կամ Վակունիս, իսկ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած Դիզակի ութ գաւառների ցուցակում՝ Վերին Վայկունիք) հաստատապէս տեղորոշելու Հակարի գետի Շալուայ ձախ օժանդակի հովտում, Արցախը

Սիւնիքից բաժանող նրա միւս՝ Հոչանց օժանդակի եւ Արցախեան լեռնաշղթայի միջեւ, հիսիսում մինչեւ Հակարիի եւ Տրտուի ջրբաժան Բեւեռաթափի լեռները: Այստեղ իր անունը ցայսօր անփոփոխ պահպանած Վաղազին գիւղի մերձակայ Վաղազնոյ գետը Վակունիս բնակավայրի հետ միասին է հանդէս գալիս դեռեւս Գտչավանքի 1246 թ. շինարարական վիմագրում («Վակունիս ի Վաղազնո[յ] գետովն...»), որի շնորհիւ առաջ է գալիս Վակունիս տեղանունը Վաղազինի դիմացի (դէպի հիւսիս-արեւմուտք) լանջին Բչանիս յորջորջմամբ գիւղանուան հետ համադրելու հնարաւորութիւնը: Այս Վակունիսից 9 կմ հիւսիս-արեւմուտք գտնուող Արախիշ (վերածուած Արիքլուի, սակայն առջեւում՝ **Արախշուն** հանդամասով) գիւղում ԺՁ դ. ընդօրինակուած երկու ձեռագրերից մէկում գրութեան վայրը նշուած է՝ «ի յերկիրն Վ[ա]կունիս, ի գ[ե]աւղս, որ կոչի Արախիշ», իսկ «Ծար երկրի» Մոս գիւղում 1653 թ. ընդօրինակուած ձեռագրի ստացողը կոչուած է՝ «բնական ի յերկրէն **Մաղաւզոյ**, ի գեղջէն **Ռախիշոյ**»: Ուշմիջնադարեան Մաղաւուզ (տարբ. Մաղայոզ) գաւառի տեղորոշումը Շալուայի գետահովտում կասկածի ենթակայ չէ, քանի որ գրչագրերում ու վիմագրերում յիշուած են նրա Արտաշիբի (ներկայիս Արտաշաւի, Վաղազինից 2 կմ հարաւ) եւ Բազմատուս (հմմտ. Բիւլիւլդուզ [<Բիւրատուս] յորջորջումով գիւղը՝ եւս 6 կմ հարաւ) բնակավայրերը: Ըստ ԺՁ դ. մի յիշատակարանի՝ Վակունիս երկրում էր նաեւ Հովատուս (միւս ձեռագրի յիշատակարանում՝ Հաւատուս, իսկ երկրորդ անունով՝ Հընկուզակ) գիւղը, որի անունը համադրելի է թուում Սուվատ գիւղատեղիի յորջորջմանը՝ Վաղազինից 6 կմ հիւսիս:

Ընդ սմին Տրտու գետի վերին հովիտը, ուր աւանդական սխալով տեղադրւում էր Վայկունիք գաւառը (Մովսէս Դասխուրանցու կողմից յիշատակուած **Վայունիք** գիւղանուան հետ զուգորդութեան՝ իրապէս ոչ բաւարար փաստարկով) եւ որը զարգացած միջնադարից կոչւում էր Ծար գաւառ (իր կենտրոնական բնակավայրի անունից), վաղ միջնադարում անհրա-

ժեշտ է համարել Սիւնիք աշխարհի հիւսիսարեւելեան Սոթք գաւառի մի մասը: Ստեփաննոս Օրբէլեանը, օգտա-գործելով վաղ շրջանի տուեալները (մինչեւ Թ դ. փոփոխութիւնները)՝ Ծարը թուարկում է Տաթեւի վանքին պատկանող եւ Աղուանից երկրին (հմմ՝ Արցախին) սահմանակից շրջանների շարքում («Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէջ»): Սիւնեաց 12 գաւառների գիւղացանկերում Սոթքի 75 (76) հարկատու բնակավայրերի ցուցակի վերջին հատուածում պատմիչը նշում է ոչ միայն Ծարը, այլեւ ուրիշ գիւղանուններ, որոնք համադրելի են Տրտուի վերնահովտում եղած բնակավայրերի հետ: Օրինակ. Գետաբակք (=Գետամէջի վանք), Երերի եւ Վարժակի աղբիւր (հմմտ. Ջերմաջուր); Հոնջենք (=Հաճաւ. հմմտ. Աղահեջքում Հունչաւք - Հոչանց [<Հոչանք] զուգորդութիւնը), Եղջերուենիք (հմմտ. Մարալդամի), Աւձի գետ եւ Աւձէն (հմմտ. Օտղշլաղ): Մի այլ գլխում նա Սիւնիքի 30 նշանաւոր վանքերի թւում յիշատակում է «Դադէի վանքը»: Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային պատի 1031 թ. արձանագրութեան մէջ Հայոց կաթողիկոսութեան կենտրոնական արքեպիսկոպոսութեան սահմանները նկարագրւում են այսպէս. «յարեւելից ի Ծար գետոյ մինչեւ ի գետն Ախուրեան»: Ուշ միջնադարում եւս աշխարհացոյցեան Սոթքի (չշփոթել այդ գաւառի ձեւաւորումից առաջ գոյութիւն ունեցած աւելի մեծ տարածքով Ծաւդէացւոց իշխանութեան հետ) արեւմտեան եւ արեւելեան մասերը (Սիմէոն Երեւանցու «Ճամբռ»-ում՝ «յայսկոյս լերինն» եւ «յայնկոյս լերինն») յաճախ ընկալւում էին իբրեւ մէկ ամբողջութիւն (նշելի է լոկ, որ այս շրջանում Դադիվանքի տիրոյթը հանդիսացող Ծար գաւառն ընդգրկում էր նաեւ Թութխուի հովիտը եւ Ճափար գիւղի ու Խաղարավանքի շրջակայքերը):

Յարակից գաւառների սահմանների նշուած ճշգրտումներից յետոյ հնարաւոր է համարել, որ աշխարհացոյցեան Հարջլանք գաւառը կարող էր ընդգրկել հէնց Տրտուի Թութխու վտակի աւազանը՝ հարեւան ինչ-ինչ տարածքների հետ միասին:

Թուքխուի հովտում Հարջլանք գաւառանունը որոշակի նմանութիւն է դրսեւորում ԺԹ դարից Օրուջլու յորջորջմամբ գիւղի անունը՝ Կարասու վտակի գետաբերանում (նրա վերնահովտում «Ջամբռ»-ը նշում է Սեւաջուր բնակավայրը): Օրուջլուի հետ իրաւացիօրէն համադրւում է «Ջամբռ»-ի Հալուճ գիւղանունը (Սլ. Սարգսեան)՝ Թուքխուի հովտի Ապահէն (=Բենաքիլսեալու՝ Ղալա լեռան լանջին), Ճումէն (=Ջոմարդ), Ջուար (=Ջուլֆուգարլու), Մոս (=Մոգքենդ), Սեւաջուր, Մեծ եւ Փոքր Ղաւաչխուր (=Խալլանլու) եւ չորս այլ գիւղերի շարքում: Հաշուի առնելով Հայաստանի (նաեւ յարակից երկրների) տեղանուններում հնդիրանական Ր-Լ եւ Լ-Ր հնչիւնական անցումների յաճախակիութիւնը՝ Հալուճ անունը կարող է դիտուել իբրեւ Հարջլանք գաւառանուան հետ ուղիղ կապ ունեցող:

Վերջինիս հետ աւելի ուղղակի կապը նկատելի է Հարջանտուս տեղանուան դէպքում, որը յիշուած է Գանձասարի կաթողիկէի 1240 թ. շինարարական վիմագրում, Հասան Ջալալ իշխանի նուիրատուութիւնների հատուածում («գեղորայս Մաչեղ, Հարջանտուս, Բոլորքոչն, :Ա: լուծ ի Խաչինաձոր, Նորաշինկան գետն, Այգեստանս, Եղգընգնի»): Այստեղ թուարկուած անունները յայտնի չեն հաստատապէս Մեծ Իրանքում գտնուած Գանձասարի վանքին մօտիկ եւ վիմագրական ու այլ յիշատակումներ ունեցող տեղանունների թւում, իսկ Նորաշինկան գետը համադրելի է Խաչենագետի վերնահովտի՝ ԺԹ դարից Թազաքենդ յորջորջուող գիւղի անուան հետ: Դրանից հնարաւոր է ենթադրել, որ Հասան Ջալալի նուիրաբերած կալուածքները (այդ թւում եւ Հարջանտուսը) գտնուել են Խաչենագետի վերին վտակների շրջանում: Այդ դէպքում նկատելի է, որ Հարջլանք գաւառանուան հետ որոշակիօրէն համադրելի կարող է դիտուել նաեւ Գանձասարից քիչ արեւմուտք յառնող լեռնազանգուածի Խոջայեուրտ (Ղոջաղուրդ) յորջորջումը, որն իր բարձրութեամբ (2389,3 մ) չի զիջում աւելի արեւմուտքում Թուքխուի եւ Խաչենագետի ջրբաժան Արցախեան լեռնաշղթայի գագաթներին (2100-2300 մ) եւ որը հիւսիսից սեղ-

մելով՝ Խաչենագետի ընդարձակ վերնահովիտը բաժանում է նրա նեղ միջնահովտից: Աւելացնենք, որ այդ լեռանը կարող է վերաբերել զարգացած եւ ուշ միջնադարի 3 կալուածացանկերում (սիկելներում) յիշուած Հարզաքար (Հարազաքար, Հարցլուղայա) լեռնանունը: Դժուար չէ նաեւ նկատել, որ Խոջայեուրտով դէպի արեւելք ձգուող շղթայի Արծաթահանքի լեռներ անուան հիման վրայ հնարաւոր է առաջ քաշել այն վարկածը, թէ հաւանաբար պատահական չէ Հարջլանք անուան հիմքի նմանութիւնը բնիկ հայերէն «արծաթ» բառի (նաեւ «սպիտակ» նշանակութեամբ) հնդեւրոպական *Hark'- հիմքին (որից՝ խեթ. harki-, հին հնդկ. rajatá-, յուն. 'àrguros, հին պարսկ. ardata-, լատ. argentum եւ այլն):

Նշենք, որ ըստ Յովհ. Կարագեոզեանի՝ Հարջլանք-Հարճլանքը յիշուած է բիւզանդական Ռուսա Ա արքայի Ցովինարի սեպագրում (սիւնիք-Արցախեան 23 երկրների թւում)՝ հայերէնի սեռական հոլովով դրուած (առանց աճական Հ-ի եւ բառամիջում Կ>Ճ>Ճ հնչիւնափոխութեան ենթակայ Կ-ով) «Երկիլա» անուանաձեւով: Բայց վերջինիս հիմքը «արկտոս»-«արջ» բառով ստուգաբանելու եւ Քիրս [<Խիրս] լեռան հետ կապելու հեղինակի փորձը դժուար է ընդունել: Նշուած լեռնանունը մեզ աւելի հաւանական է թւում բխեցնել պարզապէս հայերէն «քերծ» («ժայռ») բառի նոր պարսկերէն յորջորջումից:

Յաւելելի է, որ ԺԳ դարի մի Աւետարանի յիշատակարանում՝ «Գանձասար մենաստանի» մասին ասւում է՝ «ի գլուխ սահմանաց Խաչենոյ», որը կարող է լինել արծագանքը Մեծ Իրանք եւ Հարջլանք գաւառների միջեւ հինաւուրց սահմանի: Եւ վերջապէս, եթէ ընդունելի է Հարջլանքի տեղորոշումը Թուքխուի աւազանում ու Խաչենագետի վերնահովտում, ապա կարելի է նաեւ որոշ նմանութիւն նկատել գաւառանուան եւ ուշ միջնադարում յայտնի Մրչմանց (1581 թ. սիկելում՝ Մարչամանց [<Մարջամանց], ԺԹ դարից՝ Մարջումակ, Մերջիմեկ) տեղանուան միջեւ՝ վերջինիս մէջ տեսնելով Հայաստանի հիւսիսում դիտուող անուանակերտ Մ նախդիրի յաւելում (ինչպէս՝

Ալգեթի [<Ագլեթի] - Մանգղեաց փոր, Եգր - մեգրել, Մազազ - Ազա [երկիր]): Իսկ դրա հիման վրայ հնարաւոր է ենթադրել, որ աշխարհացոյցեան Հարջլանք գաւառի մէջ կարող էր լինել նաեւ Տրտուի աջափնեայ, նոյնպէս ուշագրաւ Արագ(ջայ) անուանումով վտակի հովիտը (Բերդաձորի Ս. Գրիգորի եւ Խաղարավանքի շրջակայքերով հանդերձ)՝ Արծաթահանք լեռան հիւսիս-արեւմտակողմում:

Աշխարհացոյցեան գաւառների թուարկման տրամաբանութեան բացայայտումից յետոյ առաւել ընդունելի տարբերակ կարող է համարուել Պիանք գաւառի տեղորոշումը Կարկառի ձախափնեայ վերին վտակների գետահովիտներում, այն է՝ Վարարակնի, Տրակետի, Մեղրագետի եւ Պտրեցիքի: Ճըշտենք, որ Վարարակնի համար ասուածը վերաբերում է այդ վտակի միայն ձախափնեակին, քանի որ նրա աջ ափին արդէն սկսւում էր մշտապէս Ամարասի կամ Գտչավանքի եպիսկոպոսութեանը ենթակայ եղած հարաւային Արցախի հատուածը (ուշ միջնադարում՝ Դիզակի, Վարանդայի եւ Քոչիզի մելիքութիւնների կազմում, վերջին երկուսը՝ շուտով միաւորուած), ուր աղբիւրները յիշատակում են Շօշու (մի յիշատակարանում՝ Շուշու) եւ Զառիստ (տեղորոշումը՝ որոշ թեականութեամբ) գիւղերը:

Պիանք գաւառի նշուած գետահովիտներում տեղանունների ակնյայտ համադրումներ առայժմ չեն նկատւում, բայց կարեւոր է թւում, որ միայն այդ տեղորոշման դէպքում են իրար համադրելի դառնում «Աշխարհացոյց»-ի երկու բաժինների գաւառախմբերը: Առաջին գաւառացանկի խմբում (Մուխանք - → Պիանք → Պածկանք) Պիանքը հարաւային Արցախի՝ արեւելքից արեւմուտք թուարկուած երկու գաւառների միջեւ է, իսկ երկրորդում (Մեծ Իրանք → Պիանք → Հարջլանք) նրա դիրքը միջակայ է արդէն կենտրոնական Արցախի երկու գաւառների միջեւ (ընդ որում դրան հետեւում է հարաւային նոյն՝ «Պածկանք → Մուխանք» գաւառախմբի յիշատակութիւնը): Նշենք, որ Մուխանքի տեղադրութիւնը թերեւս հանրայայտ է (Սեւջուր

կամ Ճարտարի գետակի ու Խոնաշէնի հովիտներում եւ Կարկառի միջնահովտի աջափնեակում), իսկ Պածկանքի տեղորոշումը Վարարակնի ու Կարկառի աջափնեակում եւ Բովուրխանի լեռնազանգուածից հարաւ, մինչեւ «Վաչագանի վէպ»-ի «Պարզկանք» գաւառի (տարբ. Պազկանք, Պարսկանք) Վե[հ]կերտ (>Քերթ) գիւղը ներառեալ, ճշտուել է (թէեւ որոշ կասկածով) Գտչավանքի վիմագրի մասին մեր աշխատանքում («Հանդէս Ամսօրեայ», 1999):

Կատարուած ճշգրտումները թոյլ են տալիս քննարկման ներկայացնել երկու ուշագրաւ թուացող դիտարկումներ՝ հետագայում աւելի խոր հետազօտման ակնկալիքով:

ա) Տրտուի վերնահովիտը՝ Հարջլանքին յարակից Ծար գաւառի հատուածը (կամ գուցէ ամբողջ Սոդքը) Մեծ Իրանքի (տուեալ դէպքում՝ արդէն Խաչենի) իշխանների տիրոյթներին է միացուել (ըստ Մովսէս Դասխուրանցու տեղեկութեան) Սահլ Սմբատեանի իշխանութեան հաւանաբար վերջին տարիներին՝ Բաբեկի ձերբակալումով Արաբական խալիփայութեանը մատուցած նրա նշանակալի ծառայութեան դիմաց: Իսկ դեռեւս Թ դարի 20-ական թթ., ըստ Մովսէս Դասխուրանցու եւ Ստեփաննոս Օրբէլեանի՝ միեւնոյն ողբերգական դիպուածին վերաբերող տեղեկութիւնների համադրութեան՝ «Դադոյի վանքի խորաձորը» եղել է Սիւնեաց իշխանների տիրոյթ: Այս պահի փոփոխութիւնից յետոյ է միայն, որ Տրտուի վերնահովիտը (Ծար, Վերին Խաչեն) սկսում է ինչ-ինչ ենթատեքստերում կոչուել նաեւ Փոքր Սիւնիք (առաջինը՝ Գրիգոր Մագիստրոսի մօտ), որը որեւէ չափով չպէտք է շփոթել Արցախի՝ «Աշխարհացոյց»-ի եւ Մովսէս Դասխուրանցու ուղղակի տեղեկութիւններով յստակ տեղորոշուող վաղմիջնադարեան ամենահարաւային Սիսական-ի Կոտակ (կամ Սիսան, Սիսական Ոստան) գաւառի հետ:

բ) է դ. Սալման իբն Ռաբիա զօրավարի նուաճումների նկարագրութեան մէջ ալ-Բալազուրի արաբ պատմիչի նշած վեց գաւառներից (ըստ Ա. Տէր-Ղեւոնդեանի թարգմանութեան՝

«Շակշին [=Շակաշէն], Միսկուան [=Մեծ Կուանք], Ուդ [=Ուտի Առանձնակ], Միսրիան [=Մեծ Իրանք], Հարջալիան [=Հարջլանք], Տիար») վերջինի անունը գուցէ կարելի է ոչ թէ համադրել հարաւային Ուտիքի Տրի (Ֆիզուլու շրջանում եւ դէպի հարաւ-ու արեւելք) գաւառանուան հետ, այլ փնտրել Պիանքի վերը ճշտուած տարածքում՝ իբրեւ վարկած ենթադրելով նրա կապը Տրակետ [<Տրագետ] գետանուան հիմքի հետ: Այս դէպքում կը ստացուէր, որ արաբական տուեալ զօրաշարժը, գոնէ Թ դարի արաբ պատմիչին հասած լուրերի համաձայն՝ ինչ-որ կերպ չի դիպել հարաւային Արցախի գաւառներին: Այդպիսի տարբերակով տեղորոշման փորձը հնարաւոր է կիրառել դեռեւս բիաինական Սարդուրե Բ արքայի Գանձադռան սեպագիր տարեգրութեան Տերիա երկրանուան կապակցութեամբ, որը յիշուած է Կույալբա (>Մեծ Կուանք՝ Տրտուի հովտում) եւ Ուխունե (>Խոխանա[բերդ]՝ Խաչենագետի հովտում) երկրներից յետոյ (համադրումներն՝ ըստ երջանկայիշատակ Յովհ. Կարագեոզեանի, 1998):